Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ
№ 1 (188)
2006թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԸ

Նախիջևանում բանակային զորամասերի օգնությամբ ազերիները իսպառ վերացնում են հայկական ճարտարապետական հուշարձանները: Ինչպես մեծն Հյուգոն կասեր՝ «Այստեղով թուրքեր են անցել...»:

Տես՝ 3-րդ էջ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության այսօրվա տարածքը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շարուր գավառի մի մասի, Վասպուրականի Նախիջևան ու Գողթն, Սյունիքի Երնջակ, Շահապոնք և Ջահուկ գավառների տարածքներն են, որոնք 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո, 1828 և 1840 թթ. մտել են Ռուսաստանի ստեղծած «Հայկական մարզ»-ի, իսկ մարզը լուծարվելուց հետո, 1849 թ. մինչև 1918 թվականի մայիս ամիսը՝ Երևանի նահանգի մեջ:

1919 թ. վերջերից Նախիջևանի Ինքնավար Հանրապետության այսօրվա տարածքը եղել է Հայաստանի առաջին Հանրապետության կազմում:

Թեև Աղրբեջանի սանձազերծած և Թուրքիայի գործակցությամբ իրականացված 1918 և 1920 թթ. ասպատակությունների հետևանքով հայերի թվաքանակը փոխվել էր հօգուտ աղրբեջանցիների, այնուամենայնիվ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության բնակչության զգալի մասը 1920-1960-ական թթ. դեռևս կազմում էին հայերը:

➤3

ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՎԵՐՀԻՇՈՒՄ

Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միության նախաձեռնությամբ ու Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի մասնակցությամբ կազմակերպված հավաքը նվիրված էր բեղմնավոր պատմաբան, թարգմանիչ Հարություն Թուրշյանին:

Իմ խոսքը նվիրված է իմ հայրենակցի կյանքին և գիտական վաստակին:

Ծնվել է 1900 թվականին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Այնտեղ է ստացել իր նախնական կրթությունը: Տասնհինգ տարեկան էր, երբ ոչ միայն ականատես եղավ, այլև մասնակիցը վանեցիների ինքնապաշտպանական կռիվներին, որն ավարտվեց հաղթանակով:

Սակայն, առաջացած իրադրության պատճառով վան-վասպուրականցիները ստիպված եղան թողնել տունն ու մուլքը, դրախտանման Վանն ու կապուտակ Վանա ծովը, բռնել գաղթի ճամփան:

Հայտնվելով Կովկասում, նա ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որն ավարտում է 1920 թվականին:

Փոխադրվելով Բաքու, ուսանել է այնտեղի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1926-ին: Ուսանողության տարիներին և այնուհետև, հայոց լեզու և գրականություն է դասավանդել Բաքվի Հովհաննես Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում, աշխատակցել տեղի հայկական թերթին:

1931-ին փոխադրվելով Երևան, մինչև 1954 թ. եղել է «Սովետական Հայաստան» օրաթերթի ոճաբանն ու թարգմանիչը: 1947-ին «Հայ-հաբեշական առնչությունները 7-րդ դարից մինչև 20-րդ դարը» թեմայով ատենախոսության համար նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

Շռայլ ու բազմաբովանդակ է եղել Հարություն Թուրշյանի գիտական վաստակը: Դրանցից առավել նշանավորն է «Սարդարապատի հերոսամարտը» աշխատությունը, որը լույս տեսավ 1965 թվականին՝ 10.000 տպաքանակով:

Ժամանակը բարենպաստ էր այդպիսի մի աշխատության հրապարակ գալու համար, քանզի Սարդարապատի ճակատամարտը, որում Արարատյան դաշտը մտած թուրքական կանոնավոր զորքը պարտվեց ու հեռացավ, բախտորոշ նշանակություն ունեցավ եղեռնը վերապրած հայ ժողովրդի ճակատագրում:

Հարություն Թուրշյանը կարողացավ վեր հանել պատմական այն ճշմարտությունը, որ Սարդարապատի ճակատամարտը համաժողովրդական էր, նրանում մասնակցում էին ոչ միայն փոքրաքանակ հայկական զորամասերը, այլև ողջ հայ ժողովուրդը, որի թվում էին եղեռնի ճամփով Արևելյան Հայաստան փոխադրված գաղթական զորախմբերը, Վանի հերոսամարտի մասնակիցները, նաև՝ Հարություն Թուրշյանը:

Վերն ասացի, որ ժամանակը նպաստավոր էր, քանզի Երևանում տեղի ունեցան 1915 թ. եղեռնի հետ կապված իրադարձություններ, որոնք առաջացրին ազգային զարթոնք: Այդ է պատճառը, որ «Սարդարապատի հերոսամարտը» հեղինակին բարձր գնահատականի ու ճանաչման արժանացրեց: Գիրքը 1969-ին երկրորդ անգամ վերահրատարակվեց, այս անգամ՝ 30.000 տպաքանակով:

1967 թվականին Թուրշյանը հրատարակեց «Ջրաօգտագործման սիստեմը Վասպուրականում» աշխատությունը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանզի այն լուսաբանում է քաղաքի ստորգետնյա մատակարարման համակարգի գործունեությունը, իրականացվող քյանքյաններ կոչվող մասնագետների գործունեության շնորհիվ: Այդ ստորգետնյա հորերում և այրերում էին պահվում վանեցի հայերի զենքերը:

Հարություն Թուրշյանի գրչին են պատկանում նաև շատ գիտական աշխատություններ, որոնց գնահատականը թողնում ենք մասնագետ պատմաբաններին: Թուրշյանը նաև հմուտ և բեղմնավոր թարգմանիչ էր:

Հարություն Թուրշյանի անտիպ գործերի թվին է պատկանում Վանի բարբառի խիստ արժեքավոր բառարանը: Եթե այն գտնվի, ապա «Վասպուրական» հայրենակցական միության առաջնահերթ ջանքերից մեկը պիտի լինի դրա հրատարակումը:

Հակիրճ այսպիսին է իմ նշանավոր հայրենակից Հարություն Թուրշյանի գիտական վաստակը, որը կարիք ունի պատմաբանների ուսումնասիրմանն ու արժեքավորմանը:

Կարդացեք 3-րդ էջում



«Կյանքի նավակն հետ չթողեց իր ետին...»

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրահանքաբանական գիտությունների դոկտոր

ՊՂՆՁԻ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

(Սկիզբը նախորդ համարում)

Ձեռնարկության հասույթի և շահույթի հաշվարկի համար հարկավոր է ունենալ խտանյութերի վաճառքի գները և արտադրական ամբողջ ծախսերը (ինքնարժեքը), սակայն մեզ հայտնի է միայն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 2003թ. հասույթի և շահույթի չափը: Խտանյութերի վաճառքի գները «կոմերցիոն գաղտնիքի» անվան տակ մեզ չեն տրամադրվել (դրանք կարող էին ուղեցույց հանդիսանալ մեր հետագա հաշվարկների համար): Այդ հանգամանքը և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի կողմից տրված տեղեկությունները պղնձի, մոլիբդենի և ոսկու գների վերաբերյալ հաշվի առնելով՝ մենք հաշվարկել ենք 2003թ. խտանյութերի վաճառքի մոտավոր գները: Այսպես.

- պղնձի 27,41% պարունակության խտանյութից մեկ տոննա պղինձ ստանալու համար անհրաժեշտ է վերամշակման ենթարկել 3,65տ խտանյութ, որի մեջ ոսկու քանակը (մեկ տ պղնձի խտանյութում 4գ/տ ոսկու պարունակության պարագայում) կարող է կազմել 3,65x4=14,6 գ: Վերջինիս արժեքը 2003 թ. կարող էր կազմել 14,6x12,5=182,5 դոլար: Մոլիբդենի և պղնձի գների հարաբերությունը, պղնձի խտանյութում ոսկու արժեքը հաշվի առնելով, կազմել է. 16000:(3000+182,5)=5,027: Խտանյութերի մեջ մոլիբդենի և պղնձի քանակների (պարունակությունների) հարաբերությունը կազմել է 1,82: Այս պարագայում խտանյութերի վաճառքի գները (մոտավորապես) հաշվարկվել են հետևյալ հավասարումով՝ (6800 • 5,027 • 1,82) • X+41770 • X= 47,5 մլն դոլար:

X-ը (պղնձի խտանյութի մեկ տ գինը) =456,8 դոլար:

Մոլիբդենի խտանյութի մեկ տ գինը հավասար է եղել՝ 456,8 • 5,07 • 1,82 = 4179,33 դոլար:

Պղնձի 1տ գինը խտանյութում կազմել է 1667 դոլար, որը կազմել է կորզված պղնձի (ոսկու հետ միասին) գնի (3000 դոլարի) 55,6%-ը, իսկ մոլիբդենի 1տ գինը խտանյութում՝ 8367 դոլար, որը կազմել է կորզված մոլիբդենի գնի (16000 դոլարի) 52,3%-ը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի օտարման գործարքի իրականացման պահին Քաջարանի հանքաքարերում տարածված և խտանյութերի վաճառքի ժամանակ գնահատվող երեք տարրերի՝ պղինձի, մոլիբդենի և ոսկու միջին գները կազմել են համապատասխանաբար 3155, 53925 և 13,93 դոլար (ոսկու համար տրված է մեկ գրամի, իսկ պղնձի և մոլիբդենի համար՝ մեկ տոննայի գները): Այս տվյալները հաշվի առնելով (եթե դրանք մնան անփոփոխ) Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկվող խտանյութերը կարող են վաճառվել.

$$\text{պղնձինը՝ } 0{,}28 \bullet 3155 \bullet \frac{55{,}6}{100} = 491{,}2 \text{ դոլարով,}$$

$$\text{մոլիբդենինը՝ } 0{,}5 \bullet 53925 \bullet \frac{52{,}3}{100} = 14101{,}4 \text{ դոլարով.}$$

Ձեռնարկության տարեկան հասույթը կարող է կազմել՝
6400 • 14101,4 + 60170 • 491,2=119,8 մլն դոլար:

8,12 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 2003թ. ընդհանուր ծախսերը կազմել են 27,5 մլն դոլար: 9 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում այդ ծախսերը կարող են կազմել 27,5 : 8,12 • 9,0=30,5 մլն դոլար, հետևապես կոմբինատի շահույթը ապագայում՝ միայն ու միայն խտանյութեր արտադրելու և վաճառելու պարագայում, այնպես, ինչպես կատարվել է մինչև այժմ, այդ թվում նաև 2003թ., կարող է կազմել՝ 119,8 - 30,5=89,3 մլն դոլար (ձեռնարկության շահույթի մեծացումը տեղի է ունենալու միայն և միայն մետաղների, հատկապես մոլիբդենի գների անհախադեպ աճի հետ կապված):

Այսպիսով Քաջարանի հանքավայրի հումքային հենքի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկվող բոլոր տեսակի խտանյութերի վերամշակման մետալուրգիական գործարանների կառուցման, կորզելի բոլոր օգտակար տարրերի կորզման, մաքրման ու զտման համար պահանջվող կապիտալ ներդրումները հնարավոր կլինի կատարել հանքահարստացման ձեռնարկության (կոմբինատի) մեկ տարվա շահույթի 40-41%-ը միայն հատկացնելով:

Մինչ հոդվածը մեքենագրվում էր միջազգային շուկայում մետաղների գների՝ հատկապես մոլիբդենի գծով, զգալի փոփոխություններ տեղի ունեցան: Մոլիբդենի գինը 2005թ. փետրվարի 11-ից հետո ընկած ժամանակահատվածում նվազեց 15425 դոլարով և 2005թ. հուլիսի 25-ի դրությամբ, կազմում է 38500 դոլար՝ մեկ տոննան: Պղնձի գինը փոքր տատանումներից հետո այժմ մնում է համարյա նույն մակարդակի վրա՝ 3649 դոլար: Ոսկու և արծաթի գները փոքր ինչ նվազել են ոսկու մեկ գրամը արժե 13,51, իսկ արծաթինը՝ 0,22 դոլար:

Մետաղների գների այս փոփոխությունների պայմաններում Զանգեզուրի համալիր ձեռնարկության տարեկան հասույթը կարող է կազմել 193,7 մլն դոլար, որից էլ շահույթը՝ 120,9 մլն դոլար: Հանքահարստացման ձեռնարկության արտադրած խտանյութերի գները կարող են կազմել.

$$\text{պղնձինը՝ } 0{,}28 \bullet 3649 \bullet \frac{55{,}6}{100} = 568{,}08 \text{ դոլար}$$

$$\text{մոլիբդենինը՝ } 0{,}5 \bullet 38500 \bullet \frac{52{,}3}{100} = 10067{,}7 \text{ դոլար}$$

Հանքահարստացման ձեռնարկության տարեկան հասույթը կարող է կազմել 6400 • 10067,7 + 60170 • 568,08 = 98,6 մլն դոլար, որից էլ շահույթը՝ 68,1մլն դոլար:

Մետալուրգիական գործարաններ կառուցելու համար պահանջվող կապիտալ ներդրումների (36 մլն դոլար) գումարը կարող է կազմել հանքահարստացման ֆաբրիկայի մեկ տարվա շահույթի 52,9 տոկոսը:

2005թ. փետրվարի 11-ից սկսած մոլիբդենի գինը նվազելով հուլիսի սկզբին հասավ 2004թ. հոկտեմբերից հետո փոփոխական աճող և նվազող գների ամենացածր մակարդակին՝ 38500 դոլ./տ, սակայն 2005թ. հոկտեմբերին այն այնպիսի թռիչք կատարեց, որ զարմանք առաջացրեց նույնիսկ ամենալավատես մասնագետների շրջանում: Մոլիբդենի մեկ տոննայի գինը միջազգային շուկայում 2005թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ հասավ 74 հազ. դոլարի: Մոլիբդենի հետ համատեղ աննախադեպ չափերով աճեցին նաև ոսկու, արծաթի և պղնձի գները. ոսկու մեկ գրամը նույն 2005թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ արժե 15,21 դոլար, արծաթինը՝ 0,25 դոլար, իսկ պղնձի մեկ տոննան՝ 4129 դոլար: Նման պարագայում Զանգեզուրի կոմբինատի կողմից թողարկվող խտանյութերը միջազգային շուկայում կարող են վաճառվել.

$$\text{պղնձինը՝ } 0{,}28 \bullet 4129 \bullet \frac{55{,}6}{100} = 642{,}8 \text{ դոլ./տ,}$$

$$\text{մոլիբդենինը՝ } 0{,}5 \bullet 74000 \bullet \frac{52{,}3}{100} = 19351 \text{ դոլ./տ:}$$

Կոմբինատի տարեկան հասույթը կարող է կազմել.
6400 • 19351 + 6017• 642,8 = 162524 հազ. դոլար:
Կոմբինատը շահույթն այս պարագայում կարող է կազմել.
162,5 – 30,5 = 132,5 մլն դոլար

Մետալուրգիական գործարաններ կառուցելու համար պահանջվող կապիտալ ներդրումների գումարը (36 մլն դոլար) կարող է կազմել հանքահարստացման կոմբինատի մեկ տարվա շահույթի 27,2%-ը:

Եվ վերջապես, կարևորն այն չէ, թե՝ որքանով նվազեցին մետաղների գները մի ինչ-որ ժամանակահատվածում և որքանով աճեցին: Կարևորն այն է, որ վերջին մեկ տարում զգացվում է մեզ հետաքրքրող մետաղների (ոսկու, արծաթի, պղնձի և մոլիբդենի) գների աճի միտում, այնինչ՝ 2004թ. կեսերին, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պարոն Կ.Ճշմարիտյանը ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ պարոն Ֆ.Սարգսյանի նամակին ի պատասխան հաստատ համոզմունք էր հայտնել, որ բոլոր նշված մետաղների գները կնվազեն և մեր հանրապետությունը կկանգնի «կոտրած տաշտակի առջև», եթե մենք շուտափույթ (անհապաղ) չվաճառենք Զանգեզուրի կոմբինատը. ծախողվեց ՀՀ կառավարության ևս մեկ «հանճարեղ» կանխատեսում:

Ուկրաինան 2005թ. հոկտեմբերի 24-ին 4,8 մլրդ դոլարով՝ դարձյալ գերմանական ֆիրմայի, վաճառեց «Կրիվոռոժստալ» մետալուրգիական կոմբինատը, իսկ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը վաճառվել է ընդամենը 132 մլն դոլարով, որը՝ նույնիսկ այդ չնչին գումարը, միանգամից չի մուծվել պետական գանձարան: Ինչո՞ւ: Ինչո՞ւ նվիրատվության կարգով «վաճառվեց» այդ կոմբինատը: Եվ ինչո՞ւ «վաճառվեց» ընդհանրապես. հարցի ճշմարիտ պատասխանը կցանկանայինք ստանալ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պարոն Ճշմարիտյանից:

Ավարտելով հոդվածը անհրաժեշտ ենք համարում ՀՀ կառավարությանը հիշեցնել մի շատ կարևոր իրողության մասին. Ռուսաստանի Դաշնության կառավարության ներկայացմամբ Պետդուման 2005թ. առաջին ամիսներին, օրենք ընդունեց բնական ռեսուրսների շահագործման վերաբերյալ: Այդ օրենքով բնական ռեսուրսների՝ հիմնականում և գլխավորապես ընդերքի հարստությունների, բոլոր տեսակների շահագործման իրավունքն արգելվել է օտարերկրյա ֆիրմաների, ասել է թե օտարերկրացիների, տնօրինությանը հանձնելը:

Բնական ռեսուրսներով, այդ թվում նաև ընդերքի հարստություններով շատ հարուստ (Հայաստանի հետ համեմատ հարյուրապատիկ ու հազարապատիկ հարուստ) երկիրը արգելում է իր ընդերքի նույնիսկ չնչին մասն օտարներին տրամադրելու գործը, իսկ Հայաստանը ... «Խնդրեմ, համեցե.ք» և օտարներին է «նվիրում» ամեն ինչ:

ՀԱՅԱՍՏԱՆ - 21 ԴԱՐ

Ապրում ենք...

Աղոթում ենք...

Պարում ենք..

Հագնվում...

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո, մինչև 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի կնքումը, Նախիջևանի մարզը դե յուրե գտնվել է նաև Խորհրդային Հայաստանի կազմում: Այս իրողությունը ամրագրվել է Խորհրդային Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության (հեղկոմ) 1920 թ. նոյեմբերի 30-ին հրապարակած հատուկ հռչակագրով, որը Նախիջևանն ու Արցախը հայտարարում էր Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս:

Բոլշևիկյան Ռուսաստանի պարտադրանքով 1921 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի և Այսրկովկասի հանրապետությունների միջև Կարսում կնքված պայմանագիրը վավերացրեց Հայաստանի Հանրապետության մասնատումը և Նախիջևանի մարզի բռնազատումը մայր հայրենիքից:

Այնուհետև Ադրբեջանը, անտեսելով դաշնագիրը ստորագրած բոլոր կողմերի (Վրաստան, Թուրքիա և Հայաստան) գոնե ձևական համաձայնությունը, 1924 թ. փետրվարի 9-ին երկրամասը հռչակեց Ադրբեջանի մաս կազմող Ինքնավար Հանրապետություն: Այդ անիրավազոր որոշմամբ Խորհրդային Միությունը և Ադրբեջանը խախտեցին 1921 թ. մարտի 16-ի և հոկտեմբերի 13-ի պայմանագրերի առանց այն էլ ապօրինի կետերը, որոնցով Նախիջևանի մարզը ոչ թե կցվում էր Ադրբեջանին, որպես այդ երկրի բաղկացուցիչ մաս, այլ հանձնվում էր նրա «խնամակալությանը»:

1921 թ. սկսած Ադրբեջանը Նախիջևանի հայ բնակչության հանդեպ վարել է նրանց մարդկային ու ազգային արժանապատվությունը ոտնահարելու, իրենց բնօրրաններից դուրս մղելու հետևողական քաղաքականություն, որի հետևանքով 1921-1989 թթ. ընթացքում տեղաբնիկ հայերը բռնի վտարվեցին իրենց բնօրրանից:

Նախիջևանում և իր պատմական հայրենիքի այլ վայրերում հազարամյակներ շարունակ հայության ստեղծած մշակութային ժառանգությունն ունի համամարդկային նշանակություն, որն ավելի քան 200 տարի ուսումնասիրում են նաև օտարազգի գիտնականները: Ներկայումս, երբ միջազգային հանրությունը Արցախի խնդիրը ողջամիտ լուծելու համար ուղիներ է որոնում, կանոնավոր բանակով Ադրբեջանի կառավարության կողմից իրականացվող մշակութային ջարդը ի դերև է հանում այդ քայլերը:

Օտար գիտնականների հաշվումներով Ջուղայում 17-րդ դարում կար 9-17-րդ դարի 10 հազար խաչքար: 1905-1906 թթ. սկսած և 1920-70-ականներին շարունակված մշակութային ջարդը ոչնչացրեց շուրջ 6 հազար խաչքար:

Մինչև 1998 թվականը Ջուղայում հաշվառված էր մոտ 3000 խաչքար: Այդ 3000 խաչքարերը և մի քանի եկեղեցիները Ադրբեջանը իր բանակի զինվորներով ոչնչացրեց 1998, 2003 և 2005 թվականներին: Շոտլանդացի մասնագետը 2005 թ. լուսանկարել-արձանագրել և հանրությանը իրազեկել է, որ Նախիջևանի հայկական այլ հուշարձանները ևս անխնա ոչնչացվել են նաև երկրամասի այլ բնակավայրերում (Շոռոթ, Ագուլիս, Ապրակունիս, Քոնա, Շահապոնք և այլն):

Հայաստանի կառավարությունը միջազգային համապատասխան կառույցներին, որոնց թվում նաև իսլամական երկրների միջազգային հաստատություններին, պիտի վճռական գործողություններով օգնի պատժիչ քայլեր ձեռնարկել Ջուղայի և Նախիջևանի այլ հուշարձանները ոչնչացրած Ադրբեջանի դեմ: Հայաստանի կառավարությունը անպայման կարող է որոշակի արդյունքների հասնել, եթե խնդիրը դարձնի Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթներից մեկը:

Իրավիճակն այնպիսին է, որ միայն պետականորեն է հնարավոր ոճրագործ Ադրբեջանին միջազգայնորեն դիմակազրկել և պատասխանատվության ենթարկել՝ խափանելով հայկական հուշարձանների ոչնչացումը շարունակելու նրա քաղաքականությունը:

Նախիջևանի հուշարձանների պաշտպանությունը կոժանդակի նաև Արցախի խնդրի արդարացի լուծմանը՝ միջազգային կառույցներին ցույց տալով, որ մշակույթ ոչնչացնող պետության հետ հնարավոր չէ հաշտության բանակցություններով փոխզիջման գնալ:

Հայոց հուշարձանների պաշտպանության համահայկական հանձնախումբը Հայաստանի կառավարությանը հորդորում է.

ա. Նախիջևանի հայոց միջնադարյան եկեղեցիները, գերեզմանոցների տապանաքարերն ու խաչքարերը ոչնչացնելու համար Միջազգային Արդարադատության դատարանում դատի տալ Ադրբեջանին, այդ պետությանը պարտադրել Հայաստանին հանձնելու Ջուղայում և այլ վայրերում ջարդուխուրդ արված խաչքարերի բեկորները:

բ. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել, որպեսզի Ադրբեջանից բռնագրավվի ոչնչացված հուշարձանների ու դրանց վերականգնման արժեքը, այդ պետությանը պարտադրվի թույլ տալ, որպեսզի Նախիջևանի հուշարձանների պահպանության համար այնտեղ մտցվեն միջազգային զորամիավորումներ:

գ) Հասնել այն բանին, որպեսզի միջազգային կառույցները ստեղծեն Հայաստանի և տարբեր երկրների մասնագետներից կազմված հետազոտական խմբեր, որոնք հաշվառեն, վավերագրեն ու չափագրեն Նախիջևանի ամբողջ տարածքի հայկական հուշարձանները:

դ. Դեսպանատների ու հայկական այլ կառույցների միջոցով Նախիջևանի հայոց հուշարձանները ոչնչացրած Ադրբեջանի միջազգային դիմակազրկումը դարձնել երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը:

ե. Սփյուռքի եկեղեցական, հասարակական-քաղաքական, մշակութային ու այլ կազմակերպություններն իրենց առաջնահերթ խնդիրը պետք է դարձնեն ՀՀ տարածքից դուրս գտնվող հուշարձանների, մասնավորաբար Նախիջևանի հուշարձանների պաշտպանությունը և Ադրբեջանի ոճրագործ կառավարությանը միջազգային պատասխանատվության ենթարկելու գործողությունները:

17 հունվարի, 2006 թ.
Հայոց հուշարձանների պաշտպանության համահայկական հանձնախումբ

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԸ

Հայկական հուշարձանների գենոցիդ Նախիջևանում



ԱՐԿՏԻԿԱՅԻ

ՄԵԾ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Սոլորակի գլոբալ տաքացումը տնտեսական աննախընթաց հնարավորություններ է բացում

Այսօր Արկտիկայում աննախադեպ մրցավազք է նոր տարածքների և բնական ռեսուրսների համար, որը հիշեցնում է «ոսկու տենդի» ժամանակները: Հյուսիսային բևեռի բնական ռեսուրսները խոստանում են հարյուրավոր միլիարդների (դոլար) շահույթ:



Դեռ այն ժամանակ, երբ բևեռային սառույցները տարեց-տարի սկսեցին ավելի շատ հալվել՝ գայթակղված բևեռի ստորերկրյա գազի ու նավթի հանքավայրերով և ոգևորված տեխնիկայի ընձեռած նոր հնարավորություններով, մարդիկ ու երկրները մղվեցին դեպի խստաշունչ Բարենցի ծով:

Ինչպես կարծում են Արկտիկայի մասնագետները, եթե սառույցների հալումը այդպես շարունակվի, լողացող սառույցների ահռելի զանգվածը՝ այն «թագը», որ միլիոնավոր տարիներ կրել է մեր մոլորակը, արդեն այս հարյուրամյակում ամառային ամիսներին կարող է լիովին վերանալ: Աշխարհը կստանա սեզոնային նավագնացության մի տարածք, որը իր մեծությամբ հինգ անգամ ավելի է, քան Միջերկրական ծովը:

Միացյալ ազգերի կազմակերպության կոնվենցիայով որևէ պետության պատկանող ծովատարածքը Արկտիկայում կամ մեկ այլ ծովում որոշվում է նրանով, թե տվյալ պետության շելֆը (ցամաքային հատվածը) որքան խորն է մտած ծովի մեջ: 2001 թվականին Ռուսաստանը առաջին փորձը կատարեց սահմանապատներ դնել և իրենով անել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի գրեթե կեսը, ներառած նաև Հյուսիսային բևեռը: Ռուսաստանի այդ առաջարկը առարկության հանդիպեց այլ երկրների կողմից, և Ռուսաստանը որոշեց իր հարցը ամրապնդել ու հիմնավորել աշխարհագրական նոր տվյալներով՝ այդ նպատակով հետազոտական նավ ուղարկելով բևեռ: Պատմության մեջ առաջին անգամ նավը հասավ բևեռ՝ առանց սառցահատ նավերի օգնության:

Ոչ մեկին հայտնի չէ, թե վերջին տարիներին սառույցների հալվելու պրոցեսը որքանով է պայմանավորված բնության շրջապտույտներով և որքանով աղտոտման արդյունք է: Որոշ գիտնականներ և պետական գործիչներ, մասնավորապես Ռուսաստանում, համաձայն չեն այն տեսակետի հետ, թե մարդկությունը գործ ունի անդառնալի փոփոխությունների հետ: «Վորկուտայում խնձորենին չի ծաղկի,- ասում է քաղաքագետ Իգոր Շպեկտորը, որը նաև ռուսական Անդրբեռեռային և ծայրագույն հյուսիսի քաղաքների միության պրեզիդենտն է:

Այսօր խոշոր կորպորացիաները, մերձբևեռային երկրները, ինչպես նաև ավելի հարավ ընկած պետությունները մեծ ծրագրեր են կապում բնության մեծ փոփոխության հետ: Էներգետիկ քաղց ունեցող Չինաստանը փորձարարական կայան հիմնեց Շպիցբերգենում և երկու անգամ հյուսիսային ծովերն ուղարկեց «Չնե վիշապ» սառցահատը, որը սովորաբար աշխատում է Անտարկտիդայում: Հետաքրքրությունը սառցահատ նավերի նկատմամբ վերջերս անչափ աճել է:

Այս տարվա սկզբին ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հետախուզության և հետազոտությունների վարչությունը երկօրյա փակ խորհրդակցությունում լսեց փորձագետների զեկուցումները Արկտիկայի տաքացման հնարավոր հետևանքների մասին: Խորհրդակցության հետևություններում ասվում է, որ եթե կլիմայական սույն միտումները շարունակվեն, ապա «հնարավոր է, որ Միացյալ Նահանգներին և ուրիշ պետություններին հարկ կլինի լուծել արտաքին քաղաքականության մի շարք պրոբլեմներ: Դրանք են՝ Արկտիկայում էներգակիրների հայտնաբերումն ու դրանց հանույթի հնարավորությունները, ձկնորսության զարգացումը, ծովային նոր ճանապարհներից օգտվելու միջոցները, ծովային իրավունքի շրջանակներում նոր պահանջատիրական քայլերի ձեռնարկումը, ազգային անվտանգության հարցեր և այլն:

Էներգետիկ պաշարների յուրացումը

Խամմերֆեստ նորվեգական քաղաքում, որը երկրի վրա ամենահյուսիսային քաղաքներից մեկն է, չափազանց ակնառու է մրցավազքը տարածքների և ռեսուրսների համար: Այստեղ են գալիս երիտասարդներ Նորվեգիայի տարբեր ծայրերից, Ֆինդլանդիայից, Ռուսաստանից, ասիական երկրներից, տեխնիկական մասնագետներ են հավաքվում Եվրոպայից և Հյուսիսային Ամերիկայից: Բոլորին գրավում է «Չյունանուշիկը», վիթխարի մի համալիր, որն այստեղ կառուցվում է՝ ընդունելու Բարենցի ծովից հանվող բնական գազը, այն հեղուկ դարձնելու և ծովով այլ երկրներ տեղափոխելու համար:

Նորվեգիան ցանկանում է առաջինը դառնալ արկտիկական էներգառեսուրսների յուրացման ասպարեզում: Սակայն առաջատարը լինել ծայրագույն հյուսիսի այդ դաժան պայմաններում, այդքան էլ հեշտ չէ:

«Չյունանուշիկի» վրա ծախսված գումարները հասել են 8,8 միլիարդ ամերիկյան դոլարի, որն արդեն 50 տոկոսով գերազանցել է նախնական հաշվարկները: Իսկ համալիրը դեռ պատրաստ չէ: Սպասվում է, որ 2007 թվականին «Չյունանուշիկը» կսկսի հեղուկ գազ մատակարարել ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի Կոուվ-Փոյնտ քաղաքին:

Շարունակելի

Խակերների մեծ պահանջարկ

Թե ովքեր են խակերները և թե ինչ ֆանտաստիկ հնարամտությամբ կարող են օգտագործել համակարգիչների հնարավորությունները, այսօր հայտնի է բոլորին: Խակերներին կարող են կոչել կախարդ (չար կամ բարի), կարող են գնահատել որպես պատուհաս ու չարիք նրանց անազնիվ, չարամիտ ոտնձգությունների համար և մոլորակով մեկ պայքարի միջոցներ մտածել նրանցից պաշտպանվելու համար, սակայն հաջողության հավանականությունը չափազանց փոքր է:

Մինչդեռ իրավապահ մարմինների այն ստորաբաժանումները, որոնք Ռուսաստանի Դաշնությունում մասնագիտացած են համակարգչային հանցագործությունների ասպարեզում («Կ» վարչություն) սկսել են աշխատանքի հրավիրել խակերներին:



Ինչպես հայտարարել է վարչության լրատվության պետ Անատոլի Պլատոնովը, ինքը «խակեր» բառը հայհոյանք չի համարում և հետևաբար էլ «չի ամաչում» աշխատանքի ընդունել նրանց: «Միայն այն խակերը, որը խախտում է օրենքի սահմանը, նա է դառնում մեր հաճախորդը,- ասել է նա»:

Ոմանք էլ այն կարծիքին են, որ խակերը մնում է խակեր, անկախ նրանից, թե որտեղ է նա աշխատում:

Երկարականջ քարկտիկներ Պենտագոնի համար

Հյուսիսային Դակոտայի (ԱՄՆ) համալսարանի նանոտեխնիկայի և ինժինիրինգի կենտրոնում մշակվել է սենսորային նոր տեխնիկա, որով անմիջապես հետաքրքրվել է Պենտագոնը:

Գիտնականները ստեղծել են պինգ-պոնգի գնդակների մեծության արհեստական քարեր, որոնց ներսում տեղավորված է ձայնային հաղորդիչ: Այդ «քարերը» կարող են «լսել» իրենցից 18-20 մետր հեռավորության վրա գտնվող անխտիր բոլոր ձայները և դրանք հաղորդել ընդունող կենտրոն:

Այդպիսի յուրաքանչյուր «քար» առանց վերալիցքավորման կարող է աշխատել 18 ամիս: Բացի այդ սարքերը (քարե գնդիկները) բավականին էժան են և կարող են օգտագործվել մեծ ծավալով: Այնպես որ ամերիկյան պաշտպանության նախարարության Պենտագոնի, հետաքրքրությունը այդ նորույթի նկատմամբ, միանգամայն հասկանալի է:



Տհաճ հիշողությունները կարելի է... ջնջել

Իսրայելի գիտնականները արդեն (գրեթե) կարողանում են ջնջել մարդու այս կամ այն հիշողությունը: Որպես ջնջող ռետին նրանք օգտագործում են դեղամիջոցներ, որոնք ունակ են ներգործել ուղեղի հիշողության որոշակի հատվածների վրա և ջնջել մարդու հոգեկան աշխարհը խեղող-թունավորող հիշողությունը:

Հիշողությունների վրա քիմիական միջոցներով ներգործելու եղանակը օգտագործվում է վաղուց, սակայն մինչև այժմ հնարավոր էր լինում ջնջել-մաքրել հիշողությունը կատարված իրադարձությունից հետո՝ մեկ-երկու ժամվա ընթացքում, այսինքն՝ քանի դեռ հիշողությունը չէր արմատավորվել մարդու գիտակցության մեջ:

Միայն վերջերս գիտությանը հաջողվեց ճշտել, որ ուղեղից որևէ հիշողության-ինֆորմացիայի ջնջել-մաքրելու հնարավորություն է ստեղծվում ամեն անգամ, երբ ապրածի վերհուշը դուրս է բերվում հիշողության խորքերից: Որսալով այդ պահը, գիտնականները անմիջապես մարդու այդ հիշողության վրա ներազդում են ջնջող-մաքրող դեղամիջոցներով: Իսրայելի գիտնականներին նույնիսկ հաջողվել է որոշել հիշողության վրա ներազդելու օրինաչափությունները և սկզբունքները:

Այսօրվա դրությամբ գիտնականները իրենց հայտնագործությունը փորձարկել են առնետների և ձկների վրա: Շուտով փորձերը կտեղափոխվեն մարդկանց վրա: Եվ եթե փորձարկումները հաջող ընթանան, ապա՝ «Սևազգեստ մարդիկ» հայտնի գեղարվեստական կինոնկարի ֆանտաստիկ իրադրությունը, երբ ինչ-որ սարքով ջնջում են դիմացինի հիշողությունը, կդառնա իրականություն: Միայն թե հիշողության մաքրել-ջնջելը այս անգամ կկատարվի ոչ թե ինչ-որ խորհրդավոր սարքի, այլ ներարկման կամ դեղահաբի միջոցով:

Հասկանալի է, որ այդ դեղամիջոցի պահանջարկը շատ մեծ է լինելու: Այդ ո՞ր հիմարը չի ցանկանա ազատվել-մաքրվել տհաճ, անդուր, սարսռեցուցիչ հիշողություններից...

Նարինջը պետք է լվանալ



Այս լուսանկարը ստացանք ճիշտ այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհում տարածված է թոչնագրիպի վտանգը: Մենք հաճախ մեզ հանգստացնում ենք, թե մենք մաքրասեր ազգ ենք, ավելին՝ դիմացկուն, և մեզ ոչ մի համաճարակ չի սպառնում:

Բայց ահա այս լուսանկարը տեղիք տվեց մտորումների, նույնիսկ՝ տագնապի: Նարինջը մենք գնում ենք խանութներում, շուկայում ու նկատում, թե ինչպես սպառողները պտուղները տեղավորում են գեղեցիկ ամանների մեջ, երբեմն կտրած դասավորում ափսեների մեջ ու հրամցնում հյուրերին: Փորձեք հարցնել՝ իսկ նրանք մինչև օգտագործելը լվացե՞լ են այն: Մարդիկ կզարմանան, կզայրանան. ինչո՞ւ լվանալ, երբ պտուղի միայն միջուկն են ուտում: Բայց մեզ՝ քչերիս է հայտնի, թե այդ պտուղը մինչև մեր սեղանը ի՞նչ ճանապարհ է անցնում: Ահա այս լուսանկարը մեզ կօգնի որոշ բաներ հասկանալ:

Մարոկոն նարինջի խոշորագույն արտադրողն է աշխարհում: Բայց տեսեք, թե ինչպես է նարինջը հասնում սպառողին: Հավաքած բերքը բլուրների նման կուտակվում է շուկայում, հետո տեսակավորվում է ու երկար ճանապարհով, ձեռքից ձեռք, նավից նավ ու շուկաներ անցնելուց հետո հասնում է սպառողին: Ուրեմն, պարոններ, ցանկացած պտուղ՝ նարինջ, մանդարին, սեխ ու ձմերուկ օգտագործելուց առաջ պետք է անպայման լվանալ...

Մի զայրացեք, պարոններ... Մենք, իրոք, դիմացկուն ազգ ենք, բայց ինչ իմանանք, թե հավերից ու թռչուններից հետո, էլի ինչ «գրիպ» կարող է տարածվել աշխարհում:



Գիտե՞ք արդյոք



...Որ եկեղեցական զանգերի ձուլման համար օգտագործվում է այսպես կոչված զանգային բրոնզը: Սա համաձուլվածք է, որ պարունակում է 75-80 տոկոս պղինձ, 20 % անագ (արճիճ) և 1-4 % կապար:

...Որ տնային կենդանիների ուղեղը ավելի փոքր է, քան նրանց վայրի ցեղակիցների ուղեղը: Գայլի ուղեղն, օրինակ, 20 տոկոսով ծանր է, քան հովվաշան (գամփռ) ուղեղը: Տնային կենդանիների տեսողությունը ավելի թույլ է զարգացած, ոսկորները ավելի բարակ են, արյան մեջ էրիտրոցիտների քանակը ավելի քիչ է, քան նրանց վայրի ցեղակիցների մոտ:



...Որ հռչակավոր Պիզայի աշտարակը ոչ միայն թեքվում է, այլև ճոճվում և պտտվում իր առանցքի շուրջ: Սույն փաստը ճշտեցին բրիտանացի գիտնականները, որոնք մի քանի տարի հատուկ ցուցիչների օգնությամբ արձանագրում էին Պիզայի աշտարակի պահվածքը:

Ամերիկան թռցնում է խելքը

Ամերիկացիների կեսից ավելին ուշ թե շուտ թռցնում է խելքը. ըստ որում՝ շատերը մանկական կամ դեռահաս տարիքում:

Սույն ոչ մխիթարական տվյալները ամփոփված են Միացյալ Նահանգների հոգեկան առողջության Ազգային ինստիտուտի տարեկան զեկույցի մեջ:

Թե որքանով են հավաստի Ազգային այդ հեղինակավոր ինստիտուտի տվյալները՝ ամերիկացիների որոշելու խնդիրն է: Սակայն այն ամենը, որ մենք մշտապես տեսնում ենք ամերիկյան ֆիլմերում, իսկապես մտածել է տալիս, որ այդ երկրի բնակիչների մեծ մասը խանգարված է կամ, լավագույն դեպքում, խելքը թռցնելու եզրին:

Գիտություն
Գլխավոր խմբագիր
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 30.1.2006թ.
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА